

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 հոկտեմբերի 2015 թվականի N 1192-Ն

**ՊԵՏՏԻՑԻՂՆԵՐԻ ՈՒ ԱԳՐՈՔԻՄԻԿԱՏՆԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԵՏՏԻՑԻՂՆԵՐԻ ՈՒ ԱԳՐՈՔԻՄԻԿԱՏՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԵՎ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 4-Ի N 1151-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Բուսասանիտարիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Սահմանել՝

1) պեստիցիդների և ագրոքիմիկատների փորձաքննության անցկացման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) պեստիցիդների և ագրոքիմիկատների ներմուծման և արտահանման մասին եզրակացության ձևերը՝ համաձայն NN 2 և 3 հավելվածների:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 4-ի «Բույսերի պաշտպանության միջոցների և պարարտանյութերի փորձաքննության անցկացման կարգը և բույսերի պաշտպանության միջոցների ներմուծման և արտահանման ու պարարտանյութերի ներմուծման մասին եզրակացության ձևերը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հունիսի 10-ի N 1052-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1151-Ն որոշումը:

3. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետին՝ երկամյա ժամկետում հաստատել պեստիցիդների արտադրության, պահպանման և իրացման մասին եզրակացության ձևը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Հայաստանի Հանրապետության  
վարչապետ**

**Հ. Աբրահամյան**

2015 թ. հոկտեմբերի 19  
Երևան

Հավելված N 1  
ՀՀ կառավարության 2015 թվականի  
հոկտեմբերի 15-ի N 1192-Ն որոշման

**Կ Ա Ր Գ**

**ՊԵՏՏԻՑԻՂՆԵՐԻ ԵՎ ԱԳՐՈՔԻՄԻԿԱՏՆԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ**

### **I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետություն ներմուծվող և Հայաստանի Հանրապետությունից արտահանվող, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում արտադրվող, պահպանվող և իրացվող (այսուհետ՝ իրացվող) պեստիցիդների ու ագրոքիմիկատների փորձաքննության գործընթացը:

2. Սույն կարգը չի տարածվում «Տարանցիկ փոխադրում» մաքսային ռեժիմով Հայաստանի Հանրապետություն ներմուծվող պեստիցիդների և ագրոքիմիկատների վրա:

## II. ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3. Սույն կարգում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝
- 1) **լիազորված մարմին**՝ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն.
  - 2) **փորձաքննություն**՝ պեստիցիդների և ագրոքիմիկատների խմբաքանակից վերցված նմուշների լաբորատոր փորձարկում՝ սահմանված չափորոշչին՝ ազդող նյութի համապատասխանության որոշման նպատակով.
  - 3) **խմբաքանակ**՝ ցանկացած քանակությամբ՝ նույնանման որակական հատկանիշներ ունեցող համասեռ պեստիցիդ և ագրոքիմիկատ, որը նախատեսվում է միաժամանակյա ներմուծման կամ արտահանման համար.
  - 4) **կետային նմուշ**՝ պեստիցիդների և ագրոքիմիկատների ոչ մեծ քանակություն, որը խմբաքանակից վերցվում է մեկ գործողության ընթացքում միացյալ նմուշի ձևավորման համար.
  - 5) **միացյալ նմուշ**՝ մի քանի կետային նմուշներից կազմված նմուշ.
  - 6) **միջին նմուշ**՝ միացյալ նմուշի մաս՝ առանձնացված՝ լաբորատոր փորձաքննության համար.
  - 7) **պահեստային նմուշ**՝ իրացնողի ցանկությամբ միացյալ նմուշից առանձնացված նմուշ, որը ծածկագրված, կապարակնքված կամ դրոշմակնքված հանձնվում է իրացնողին.
  - 8) **իրացնող**՝ պեստիցիդներ և ագրոքիմիկատներ ներմուծող, արտահանող, արտադրող, պահպանող ու իրացնող ֆիզիկական կամ իրավաբանական անձ.
  - 9) **լաբորատորիա**՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հավատարմագրված փորձարկման լաբորատորիա:

## III. ՊԵՍՏԻՑԻԴՆԵՐԻ ԵՎ ԱԳՐՈՔԻՄԻԿԱՏՆԵՐԻ ԽՄԲԱՔԱՆԱԿԻՑ ՆՄՈՒՇԱՌՈՒՄԸ

4. Պեստիցիդների և ագրոքիմիկատների նմուշառումը (այսուհետ՝ նմուշառում) իրականացնում է լիազորված մարմինը (այսուհետ՝ նմուշառու):
5. Նմուշառման տարաները և դրանց կափարիչները, ինչպես նաև կապարակնքման նպատակով օգտագործվող փաթեթավորող նյութերը պետք է պատրաստված լինեն պահման ու փոխադրման ժամանակ նմուշները փոփոխություններից պաշտպանող նյութերից:
6. Նմուշառումը պետք է իրականացվի ընտրանքային կարգով՝ խմբաքանակի տարբեր մասերից:
7. Պեստիցիդների խմբաքանակից կետային նմուշները վերցվում են հետևյալ չափաքանակներով՝

NN ը/կ	Խմբաքանակի տարավորված միավորի քանակը (հատ)	Կետային նմուշառման քանակը (հատ)
1.	մինչև 50	3
2.	51-150	5
3.	151-400	8
4.	401-800	12
5.	801-1500	16
6.	1501-3000	22
7.	3001-5000	28
8.	5000-ից ավելի	30

8. Տարայով պահպանվող կամ փոխադրվող ագրոքիմիկատից նմուշառումը կատարվում է՝
- 1) մինչև 50 տարայի դեպքում՝ յուրաքանչյուր հինգերորդ տարայից.
  - 2) 51-100 տարայի դեպքում՝ յուրաքանչյուր քսաներորդ տարայից.
  - 3) 101-500 տարայի դեպքում՝ յուրաքանչյուր հիսուներորդ տարայից.
  - 4) 501-1000 տարայի դեպքում՝ յուրաքանչյուր հարյուրերորդ տարայից.

- 5) 1001-5000 տարայի դեպքում՝ յուրաքանչյուր երկուհարյուրերորդ տարայից:
9. Կետային նմուշառումը կատարվում է ճեղքաձև նմուշառման սարքի միջոցով՝ հորիզոնական դիրքում գտնվող տարայի հակադիր կողմերից:
10. Առանց փաթեթավորման, շարժման մեջ գտնվող կամ շեղջով լցված ագրոքիմիկատից նմուշառումը կատարվում է՝
- 1) ագրոքիմիկատի բեռնման, բեռնաթափման կամ փաթեթավորման գործընթացների ժամանակ՝ մեխանիկական նմուշառման սարքի միջոցով կամ ձեռքով՝ անընդմեջ կամ հավասարաչափ դադարներով.
  - 2) շեղջով լցված ագրոքիմիկատից նմուշառումը կատարվում է ձեռքի փակվող նմուշառման սարքի միջոցով, շեղջի՝ առնվազն 30 սանտիմետր խորությունից, երկու հակադիր կողմերից: Ընդհանուր զանգվածից նմուշների միջև եղած հեռավորությունը պետք է կազմի 20-25 սանտիմետր: Չի թույլատրվում շեղջի գազաթից 50 սանտիմետր ցածր և շեղջի հատակից 50 սանտիմետրից բարձր նմուշառում կատարել:
  11. Յուրաքանչյուր վագոնից ագրոքիմիկատի նմուշը վերցվում է կարճակոթ գոգավոր թիակով, երկու անգամ՝
    - 1) առաջին՝ ագրոքիմիկատի բեռնաթափման ընթացքում՝ վագոնի դռան բացվածքից.
    - 2) երկրորդ՝ ագրոքիմիկատի բեռնաթափումից հետո.
    - 3) վերցվում է 3-ական կետային նմուշ՝ վերին, միջին և ներքին շերտերից, աջ և ձախ կողմերից: Կետային նմուշները միախառնում և կազմում են միացյալ նմուշ, որից առանձնացվում է միջին նմուշը: Միջին նմուշի քանակը պետք է կազմի յուրաքանչյուր վագոնում առկա ագրոքիմիկատի քաշի 0,002 տոկոսից ոչ պակաս:
  12. Ավտոմեքենաների բեռնախցիկից նմուշառումը կատարվում է՝
    - 1) մինչև 5 տոննա տարողությամբ ավտոմեքենայում առկա ագրոքիմիկատի մակերեսն անկյունագծերով բաժանվում է 7 քառակուսու, և յուրաքանչյուր քառակուսուց վերցվում է մեկ կետային նմուշ.
    - 2) 5 տոննայից ավելի տարողությամբ ավտոմեքենայում առկա ագրոքիմիկատի մակերեսը բաժանվում է 10 քառակուսու, և յուրաքանչյուր քառակուսուց վերցվում է մեկ կետային նմուշ:
  13. Յուրաքանչյուր կետային նմուշի քանակը պետք է կազմի 400 գրամից ոչ պակաս:
  14. Կետային նմուշները միախառնում, կազմում են միացյալ նմուշ և համապատասխան սարքավորմամբ բաժանում միջին նմուշների՝ 1-2.5 կիլոգրամ քաշով:
  15. Պեստիցիդների յուրաքանչյուր կետային նմուշ պետք է լինի 30 գրամից (միլիլիտրից) ոչ ավելի:
  16. Փորձաքննության համար նմուշառումն իրականացվում է, նմուշները ծածկագրվում, կապարակնքվում կամ դրոշմակնքվում են, և նմուշառման ակտը ձևակերպվում է լիազորված մարմնի ներկայացուցչի կողմից՝ իրացնողի կամ նրա լիազոր ներկայացուցչի մասնակցությամբ:
  17. Նմուշառման ընթացքում նմուշառուի կողմից կազմվում է նմուշառման մասին ակտ՝ համաձայն N 1 ձևի, որում ներառվում են՝
    - 1) նմուշառման վայրը, տարեթիվը, ամիսը, ամսաթիվը.
    - 2) նմուշառուի պաշտոնը, անունը, ազգանունը.
    - 3) իրացնողի կամ նրա լիազոր ներկայացուցչի պաշտոնը, անունը, ազգանունը, ում ներկայությամբ է իրականացվել նմուշառումը.
    - 4) պեստիցիդի կամ ագրոքիմիկատի անվանումը, արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի ծածկագիրը (ԱՏԳԱԱ-ի ծածկագիր).
    - 5) արտադրող երկիրը, կազմակերպության կամ մատակարարի անվանումը, գտնվելու վայրը.
    - 6) թողարկման տարեթիվը և ամիսը, պիտանիության ժամկետը.
    - 7) խմբաքանակը (զանգվածը կամ ծավալը).
    - 8) միջին նմուշի և պահեստային նմուշի (առկայության դեպքում) քանակը (զանգվածը կամ ծավալը) □

**IV. ՊԵՏՏԻՑԻԴՆԵՐԻ ԵՎ ԱԳՐՈՔԻՄԻԿԱՏՆԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ԱՐԴՑՈՒՆՔՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ**

18. Նմուշառուն խմբաքանակից վերցրած կետային նմուշներից կազմում է միացյալ նմուշ, որից վերցվում է միջին նմուշ: Նմուշառուն կատարում է նմուշների համապատասխան ծածկագրում և կապարակնքումից կամ դրոշմակնքումից հետո՝ ուղեկցող նամակով դրանք ներկայացնում է լաբորատոր փորձաքննության:

19. Նմուշն ընդունում է լաբորատորիայի ներկայացուցիչը, որն ստուգում է՝

- 1) ուղեկցող նամակի առկայությունը.
- 2) փաթեթավորման պահպանվածությունը.
- 3) ծածկագրի և կապարակնիքի կամ դրոշմակնիքի առկայությունը:

20. Եթե լաբորատորիայի ներկայացուցիչը հայտնաբերում է, որ նմուշը ներկայացվել է սույն կարգի 19-րդ կետի պահանջների խախտմամբ, ապա նմուշը չի ընդունվում և վերադարձվում է գրավոր հիմնավորմամբ:

21. Լիազորված մարմինը փորձաքննության ներկայացված նմուշները հաշվառում է առանձին գրանցամատյանում՝ համաձայն N 2 ձևի:

22. Լաբորատորիան մեկօրյա ժամկետում՝ վերցված նմուշների փորձաքննության արդյունքների մասին կազմում է արձանագրություն՝ համաձայն N 3 ձևի, երկու օրինակից, որոնցից մեկն ուղարկում է լիազորված մարմին, իսկ երկրորդը մնում է լաբորատորիայում:

23. Փորձաքննության մասին արձանագրությունն ստորագրում են փորձաքննություն կատարողը և լաբորատորիայի ղեկավարը: Փորձաքննության մասին արձանագրությունը վավերացվում է լաբորատորիայի կնիքով:

24. Լիազորված մարմինը փորձանմուշի փորձաքննության մասին արձանագրությունն ստանալուց հետո 24 ժամվա ընթացքում տալիս է պետիցիոների և ագրոքիմիկատների մասին եզրակացություն:

**Հայաստանի Հանրապետության  
կառավարության աշխատակազմի  
ղեկավար-նախարար**

**Դ. Հարությունյան**

Ձև N 1

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄՆԵՂԱ  
ՄԹԵՐՔԻԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ**

**Ն Մ ՈՒ Շ Ա Ռ Մ Ա Ն Մ Ա Ս Ի Ն Ա Կ Տ Ն \_\_\_\_\_**

\_\_\_\_\_ **20 թ.**

\_\_\_\_\_ ում

(վայրը, որտեղ կատարվել է նմուշառումը)

ես՝ \_\_\_\_\_,

(նմուշառուի պաշտոնը, անունը, ազգանունը)

\_\_\_\_\_ - ի

(իրացնողի կամ նրա լիազոր ներկայացուցչի պաշտոնը, անունը, ազգանունը)

ներկայությամբ՝ փորձաքննության նպատակով հաստատված կարգով վերցրել եմ միջին նմուշ:

\_\_\_\_\_ (պետիցիոյի կամ ագրոքիմիկատի անվանումը, ԱՏԳԱԱ-ի ծածկագիրը)

Արտադրող՝ \_\_\_\_\_

(երկիրը, կազմակերպության կամ մատակարարի անվանումը, գտնվելու վայրը)

Թողարկման  
ամսաթիվը \_\_\_\_\_

\_\_\_\_\_ (ամիսը, տարեթիվը)

պիտանիության ժամկետը \_\_\_\_\_

Խմբաքանակը \_\_\_\_\_

Միջին նմուշի քանակը \_\_\_\_\_ (զանգվածը կամ ծավալը)  
\_\_\_\_\_ (զանգվածը կամ ծավալը)

Պահեստային նմուշի (առկայության դեպքում) քանակը \_\_\_\_\_ (զանգվածը կամ ծավալը)

Նմուշառու \_\_\_\_\_ (ստորագրությունը) \_\_\_\_\_ (անունը, ազգանունը)

Իրացնող \_\_\_\_\_ (ստորագրությունը) \_\_\_\_\_ (անունը, ազգանունը)  
(ներկայացուցիչ)

**Ձև N 2**

**Գ Ր Ա Ն Ց Ա Մ Ա Տ Յ Ա Ն**

**ՊԵՏՏԻՑԻՆԵՐԻ ԿԱՄ ԱԳՐՈՔԻՄԻԿԱՏՆԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՎԵՐՑՎԱԾ  
ՆԱՌԻՇՆԵՐԻ**

NN ը/կ	Պետիցիդներ կամ ագրոքիմիկատներ ներմուծողի, արտահանողի, արտադրողի, պահպանողի կամ իրացնողի անվանումը կամ անունը, ազգանունը և նմուշի ծածկագիրը	Պետիցիդի կամ ագրոքիմիկատի անվանումը, ԱՏԳԱԱ-ի ծածկագիրը	Արտադրող երկիրը, կազմակերպությունը կամ մատակարարը, գտնվելու վայրը	Նմուշառման ակտի համարը, ամսաթիվը, ամիսը, տարեթիվը	Նմուշի քանակը (գրամ, միլիլիտր)	Փորձաքննության արդյունքները (արձանագրության համարը, ամսաթիվը)
1	2	3	4	5	6	7

**Ձև N 3**

(փորձաքննությունն իրականացնող լաբորատորիայի անվանումը և գտնվելու վայրը)

**Փ Ո Ր Ձ Ա Ք Ն Ն ՈՒ Թ Յ Ա Ն Մ Ա Ս Ի Ն Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N \_\_\_\_\_**

\_\_\_\_\_ 20 թ.

Պետիցիդի կամ ագրոքիմիկատի անվանումը \_\_\_\_\_

Ուղեկցող նամակի համարը, ամսաթիվը \_\_\_\_\_

Նմուշի ծածկագիրը \_\_\_\_\_, նմուշն ստանալու ամսաթիվը \_\_\_\_\_

Փորձարկվող նմուշի (նմուշների) քանակը \_\_\_\_\_

Ազդող նյութի քանակի որոշման մեթոդիկան \_\_\_\_\_

Պեստիցիդի կամ ագրոքիմիկատի անվանումը, ԱՏԳԱԱ-ի ծածկագիրը	Ազդող նյութը	Արտադրող երկիրը, կազմակերպությունը կամ մատակարարը	Ցուցանիշը		Եզրակացություն սահմանված չափորոշիչներին համապատասխանության մասին
			ըստ սահմանված չափորոշիչների	փաստացի՝ ըստ փորձաքննության	

Արձանագրությունը կազմված է \_\_\_\_\_ օրինակից:

Փորձաքննություն կատարող

\_\_\_\_\_ (ստորագրությունը)

\_\_\_\_\_ (անունը, ազգանունը)

Լաբորատորիայի ղեկավար

\_\_\_\_\_ (ստորագրությունը)

\_\_\_\_\_ (անունը, ազգանունը)

Կ.Տ.

Հավելված N 2  
ՀՀ կառավարության 2015 թվականի  
հոկտեմբերի 15-ի N 1192-Ն որոշման

Ձև

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄՆԵՂԱ ՄԹԵՐՔԻԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ**

**Ե Ջ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն N \_\_\_\_\_**

**ՊԵՏՏԻՑԻՂՆԵՐԻ ԵՎ ԱԳՐՈՔԻՄԻԿԱՏՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ**

Հայտատու \_\_\_\_\_

(իրավաբանական անձի անվանումը կամ ֆիզիկական անձի անունը, ազգանունը)

\_\_\_\_\_ (գտնվելու վայրը կամ հասցեն)

Արտադրող երկիրը, կազմակերպությունը կամ մատակարարը \_\_\_\_\_

Պեստիցիդի կամ ագրոքիմիկատի անվանումը	ԱՏԳԱԱ-ի ծածկագիրը	Քանակը (կգ կամ լ)	Թողարկման ամիսը, տարեթիվը

Համաձայն \_\_\_\_\_ 20 թվականի N \_\_\_\_\_ փորձաքննության մասին արձանագրության՝ \_\_\_\_\_ պեստիցիդը կամ ագրոքիմիկատը համապատասխանում է սահմանված չափորոշիչներին:

Թույլատրվում է \_\_\_\_\_ պեստիցիդը կամ ագրոքիմիկատը ներկրել Հայաստանի Հանրապետություն:

Եզրակացությունն ուժի մեջ է մինչև \_\_\_\_\_ 20 թ.

Պատասխանատու ստորագրածանման ղեկավար՝

(ստորագրությունը)

(անունը, ազգանունը)

\_\_\_\_\_ 20 թ.

Կ.Տ.

**Հայաստանի Հանրապետության  
կառավարության աշխատակազմի  
ղեկավար-նախարար**

**Դ. Հարությունյան**

Հավելված N 3  
ՀՀ կառավարության 2015 թվականի  
հոկտեմբերի 15-ի N 1192-Ն որոշման

26

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄՆՆԴԱ  
ՄԹԵՐՔԻԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ**

**Ե Ջ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն N \_\_\_\_\_**

**ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԳՐՈՔԻՄԻԿԱՏՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ**

Հայտատու \_\_\_\_\_

(իրավաբանական անձի անվանումը կամ ֆիզիկական անձի անունը, ազգանունը)

(գտնվելու վայրը կամ հասցեն)

Արտադրող երկիրը, կազմակերպությունը կամ մատակարարը

Պետտիցիդի կամ ագրոքիմիկատի անվանումը	ԱՏԳԱԱ-ի ծածկագիրը	Քանակը (կգ կամ լ)	Թողարկման ամիսը, տարեթիվը

Համաձայն \_\_\_\_\_ 20 թվականի N \_\_\_\_\_ փորձաքննության մասին  
արձանագրության՝ \_\_\_\_\_ պետտիցիդը կամ ագրոքիմիկատը համապատասխանում է  
սահմանված չափորոշիչներին:

Թույլատրվում է \_\_\_\_\_ պետտիցիդը կամ ագրոքիմիկատն արտահանել  
Հայաստանի Հանրապետությունից:

Եզրակացությունն ուժի մեջ է մինչև \_\_\_\_\_ 20 թ.

Պատասխանատու ստորագրածանման ղեկավար՝

(ստորագրությունը)

(անունը, ազգանունը)

\_\_\_\_\_ 20 թ.

Կ.Տ.

**Հայաստանի Հանրապետության  
կառավարության աշխատակազմի  
ղեկավար-նախարար**

**Դ. Հարությունյան**